2014 ԹՎԱԿԱՆԻ
ՀՀ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ
ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻ ՀՌՉԱԿՄԱՆ ՄՐՑՈՒՅԹ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ
ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ
ԷԹՆՈ-ՍՈՑԻՈ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԱՐԳԱՑՈՒՄԸ

Համալսարանն ինտերնետում

Տեղադրվել է 02-07-2010

Նոր ժամանակները թելադրում են նոր կանոններ: Այսօր համալսարանի ծնունդն էին նշում:

Վիրտուալ համալսարանն արդեն մեկ տարեկան է:

Հայկական վիրտուալ համալսարանը կամ, ինչպես նրան «դիմում են» կրճատ՝ ՀՎՀ-ն, «Հայկական բարեգործական ընդհանուր միության» նորագույն ուսումնական հաստատություն է, որը կրթության բոլորովին նոր տարբերակ է առաջարկում:

«Ծնվելով» նախորդ տարվա հունիսին եւ դառնալով հայկական առաջին օն-լայն համալսարանը՝ ՀՎՀ-ն բոլորովին նոր հնարավորությունների հիմք դրեց եւ մինչ այժմ անիրական թվացող հորիզոններ բացեց: Թվայնացված դարաշրջանի օն-լայն համալսարանի գլխավոր նպատակը հայեցի կրթությունը նաեւ սփյուռքի ու առհասարակ բոլոր ցանկացողների համար իրականություն դարձնելն է:

Հայկական վիրտուալ համալսարանում գործում են երեք՝ լեզվի, պատմության ու մշակույթի ֆակուլտետներ: Եւ որպեսզի նպատակն արդարացվի, ու հայեցի կրթությունը մատչելի ու հասանելի լինի բոլոր ցանկացողների համար, այն իրականացվում է 6 լեզուներով՝ հայերեն (արեւելահայերեն եւ արեւմտահայերեն), անգլերեն, ռուսերեն, ֆրանսերեն եւ իսպաներեն:

Մեկ տարվա ընթացքում համալսարանն անցկացրել է 4 ուսումնական շրջան, որոնց մասնակցել են 35 երկրների 500 ուսանողներ:
Չնայած համալսարանի գործունեության չափազանց կարճ ժամանակահատվածին՝ այն ձեռք բերվածով չի սահմանափակվում: Պարբերաբար ուսումնասիրվում եւ արդիականացվում են ծրագրերը, դասավանդման մեթոդները, քաղաքականությունն ու գործունեությունը: Ի վերջո, բարձր տեխնոլոգիաների չափազանց արագ զարգացող դարաշրջանում պետք է անել ամեն ինչ, որ հնարավորինս բավարարվեն ուսանողության արդի պահանջները:

Ուսուցումն այս համալսարանում իրականացվում է խառը մեթոդով. օն-լայն ուսուցումը համադրվում է ավանդականի հետ: Խառն ուսուցման մեթոդի կիրառման ընթացքում դասը վերահսկվում է երկու դասատուների՝ ՀՎՀ ուսուցչի եւ դասվարի կողմից:

Լիլիթ Գրիգորյան

|

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

«Armnet 2013». սպասված մրցանակաբաշխություն
01-12-2013

«1 գավաթ ջերմություն...»
01-12-2013

Մրցույթ երիտասարդ գիտնականների համար
29-11-2013

Հայկական ժամանակակից կինոն՝ «Սեւ գիշերներ»-ում
29-11-2013

Վենգերովը երեւանյան բեմում է
28-11-2013

Այլ լուրեր

ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆ

«Armnet 2013». սպասված մրցանակաբաշխություն
2013-12-01 16:57:23

«1 գավաթ ջերմություն...»
2013-12-01 14:32:32

Վենգերովը երեւանյան բեմում է
2013-11-28 23:54:14

«Մարզական պոլիտեխնիկ»
2013-11-28 23:25:10

Յուրաքանչյուրն ունի իր «Աշնան արեւը»...
2013-11-28 22:03:27